ISSN 1829-2925

# ԾՈՂԻԿ

Shoghik
2026/3

## Թղթակ, թուխակ, բացի՛ դուռդ

**Հիմնադիր՝**
**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

**Խմբագրական խորհուրդ՝**
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Հասմիկ Հարությունյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

**Editorial Board:**
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Hasmik Harutyunyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01Ս 000035
Հրատարակչության 25-րդ տարի

«Ծողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

**Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA) © ՀԱԵ / ECA**

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 3.000:
Տարածվում է անվճար:

# Թըխկ, թըխկ, բացի՛ր դուռը



Ողջո՛ւյն, սիրելի՛ ընթերցող: Վերջապես եկել է բոլորիս ամենասիրած եղանակը՝ արևառատ և արկածներով լի ամառը: Արձակուրդներն արդեն սկսվել են, իսկ դա նշանակում է, որ կարող ենք պատրաստվել նոր բացահայտումների:

Թըխկ, թըխկ, այդ ո՞վ է թակում դուռը: Սպասի՛ր, դռները, պարզվում է, մի քանիսն են: Արի միասին բացենք դրանք:

Առաջին դռան հետևում գտնում ենք ինքներս մեզ՝ համարձակ, առողջ, խելացի ու տաղանդավոր:

Երկրորդ դռան հետևում մեր ընտանիքն է, որի հոգատար ու սիրելի զավակներն ենք մենք:

Երրորդ դուռը բացվում է դեպի ընկերների մեծ շրջապատ: Այստեղ մենք հավատարիմ ու լավ ընկերներ ենք, որոնց վրա միշտ կարելի է հույս դնել:

Չորրորդ դուռը տանում է դեպի մեր մեծ տուն՝ հայրենիք, որի պատասխանատու և սրտացավ քաղաքացիներն ենք մենք:

Եվ կա մի կարևոր՝ հինգերորդ դուռը, որի հետևում Աստված սպասում է յուրաքանչյուրիս: Դա եկեղեցու դուռն է:

Դե ի՞նչ, պատրա՞ստ եք: Թըխկ, թըխկ, բացի՛ր դուռը և բացահայտի՛ր ինքդ քեզ յուրաքանչյուր դռան հետևում:



# ՄԱՆՈՒԿ ՀԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Եվ երբ ամեն բան Տիրոջ օրենքի համաձայն կատարեցին, վերադարձան Գալիլեա՝ իրենց Նազարեթ քաղաքը: Իսկ մանուկն աճում էր ու զորանում՝ լի իմաստությամբ, և Աստծու շնորհը նրա վրա էր:

Նրա ծնողներն ամեն տարի Զատկի տոնին Երուսաղեմ էին գնում: Եվ երբ նա տասներկու տարեկան դարձավ, նրանք, տոնի սովորության համաձայն, Երուսաղեմ գնացին: Երբ տոնակատարության օրերը լրացան, և նրանք վերադարձան, մանուկ Հիսուսը Երուսաղեմում մնաց. նրա ծնողները չիմացան այդ մասին: Կարծելով, թե նա ուղեկիցների հետ է, մեկ օրվա ճանապարհ եկան, ապա նրան փնտրեցին ազգականների ու ծանոթների մեջ: Երբ նրան չգտան, հետ դարձան Երուսաղեմ՝ նրան փնտրելու: Երեք օր հետո նրան գտան տաճարում՝ վարդապետների մեջտեղում նստած. նա լսում էր նրանց ու հարցեր տալիս: Բոլոր նրան լսողները զարմանում էին նրա իմաստության ու պատասխանների վրա: Երբ ծնողները նրան տեսան, ապշեցին: Նրա մայրն ասաց. «Որդյա՛կ, ինչո՞ւ մեզ հետ այդպես արեցիր. ահավասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտրում»: Եվ նա ասաց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտեի՞ք, որ ես պետք է իմ Հոր տանը լինեմ»: Իսկ նրանք չհասկացան այն խոսքը, որ իրենց ասաց: Եվ նրանց հետ իջավ ու Նազարեթ գնաց. և նրանց հնազանդ էր: Նրա մայրն այս բոլոր բաները պահում էր իր սրտում: Հիսուսն Աստծու և մարդկանց առաջ զարգանում էր իմաստությամբ, հասակով ու շնորհով:

Ղուկաս 2.39-52

# Ես՝ Իսկական Հիսուսը

Հիսուսը, լինելով Աստծո Որդին, միևնույն ժամանակ ունեցել է սովորական մանկություն: Ինչպես յուրաքանչյուր երեխա, Նա էլ էր սիրում խաղալ, վազվզել ու զվարճանալ իր ընկերների հետ, բայց նաև հստակ գիտեր, թե ինչն է կյանքում ամենակարևորը, և երբեք չէր մոռանում Աստծո մասին: Այն, որ տասներկու տարեկան հասակում Նա տաճարում զրուցում էր գիտուն մարդկանց հետ, փաստում է նրա աշխատասիրության և հետաքրքրասիրության մասին: Նա ջանասիրաբար սովորում էր, կարդում ու հարցեր տալիս, ինչի շնորհիվ կարողանում էր հավասարը հավասարի պես զրուցել մեծահասակների հետ: Հիսուսի կերպարը նաև մեզ սովորեցնում է լինել ինքնուրույն և համարձակ՝ չվախենալ արտահայտել մեր մտքերը կամ հարցեր տալ:

Այս ամենի հետ մեկտեղ՝ Հիսուսը մնում էր խոնարհ ու հնազանդ իր ծնողներին: Որպես հյուսնի որդի՝ նա պատրաստակամորեն օգնում էր իր հայրիկին արհեստանոցում: Ֆիզիկական աշխատանքը նրան դարձնում էր ավելի ուժեղ և կարգապահ՝ սովորեցնելով մեզ, որ ծնողներին օգնելը սիրո լավագույն դրսևորումներից մեկն է:

Հիսուսի օրինակով մենք պետք է լինենք առողջ և ուժեղ (հասակ), խելացի (իմաստություն) ու սիրված (շնորհ): Նա օրինակ է, որին պետք է ձգտենք նմանվել:

## ԼՐԱՑՐՈ՛Ւ ԱՂՅՈՒՍԱԿԸ՝ ԸՆՏՐԵԼՈՎ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ:

**Հետաքրքրասեր լինել, պատվիրաններն իմանալ, օգնել ծնողներին, բանջարեղեն ուտել, հարցեր տալ, բարեգործություն անել, հեռախոսը չափավոր օգտագործել, քաջալերել ընկերոջը, դասերը սովորել, սիրալիր լինել, ներողամիտ լինել, համարձակ լինել, ժամանակին քնել, շատ քայլել, գիրք կարդալ:**

## Ինչպե՞ս մեծանալ Հիսուսի նման

| Հասակով | Իմաստությամբ | Շնորհիվ |
| --- | --- | --- |

# ԴՈՒ ԵՍ ՔՈ ԿՅԱՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԸ

Երբևէ մասնակցե՞լ ես շինարարական աշխատանքի կամ ականատես եղել, թե ինչպես են տուն կառուցում: Գիտե՞ս, թե հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնել, որպեսզի շինությունն ամուր ու ապահով լինի:

Առաջարկում եմ միասին սկսենք մի փոքրիկ տուն կառուցել, որի ընթացքում կբացահայտենք շատ կարևոր գաղտնիքներ ինչպես շինարարության, այնպես էլ մեր կյանքի մասին:

# ՏԱՆ ՀԻՄՔԸ

Տան հիմքը շինարարության ամենակարևոր ու պատասխանատու փուլն է, որտեղից սկսվում է ամեն ինչ: Դա կառույցի այն անտեսանելի մասն է, որն իր վրա է վերցնում ամբողջ շինության ծանրությունը: Որպեսզի տունը հաստատուն լինի, շինարարները նախևառաջ հետազոտում են հողը, որովհետև փխրուն կամ ավազոտ վայրում հիմքը պետք է շատ ավելի խորը փորել: Այստեղ խնայել չի կարելի. օգտագործվում են ամենաամուր նյութերը՝ բետոնն ու երկաթյա ամրանները: Թեև շինարարությունից հետո դրանք այլևս չեն երևում, սակայն դրանցից է կախված՝ տունը կդիմանա՞ տարիների փորձությանը, թե՞ կփլվի առաջին իսկ ցնցումից:

Այս մասին Աստվածաշնչում մի հետաքրքիր հատված կա, որը գրված է Մատթեոս 7.24-27-ում. «Արդ, ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որն իր տունը կառուցեց ժայռի վրա: Անձրևը եկավ, գետերը հորդեցին, քամիները փչեցին և զարկեցին տանը, բայց այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված: Իսկ ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք չի կատարում, կնմանվի մի անխելք մարդու, որն իր տունը կառուցեց ավազի վրա: Անձրևը եկավ, գետերը հորդեցին, քամիները փչեցին, զարկեցին տանը, ու այն կործանվեց, և նրա կործանումը մեծ եղավ»:

Մեր կյանքը շատ նման է այս շինարարությանը: Ավազի վրա կառուցվող տունն ամուր հիմք չուներ, իսկ ժայռը ամուր հիմք է տան համար: Մեր կյանքում այդ հիմքը Քրիստոսն է և Աստծո խոսքի իմացությունը, որ օգնում է ամուր կանգնել դժվարությունների ժամանակ: Տան հիմքը պետք է խորը փորել, իսկ հոգևոր կյանքում «խորը փորել» նշանակում է ժամանակ տրամադրել Աստծուն, աղոթքին, ապրել  այնպես, ինչպես Աստված է պատվիրում Աստվածաշնչում: Եթե մարդու «հիմքը» թույլ է, այսինքն՝ իմանալով Աստծո խոսքը՝ նա չի հնազանդվում և չի կիրառում այն իր կյանքում, ապա նմանվում է ավազի վրա կառուցված շինության, որը հեշտ է կառուցել, բայց դժվարությունների ժամանակ անհնար է պահպանել: Իսկ ժայռի վրա կառուցելը թեև պահանջում է քրտնաջան աշխատանք ու ջանք, արդյունքը լինում է հավերժական ու անսասան:
Ուստի, լինելով քո կյանքի շինարարը՝ հիշիր, որ հարկավոր է ունենալ ամուր հոգևոր հիմք, որը քեզ կպահի կանգուն ու անվախ ցանկացած փոթորկի ժամանակ:

# ՏԱՆ ՊԱՏԵՐԸ

Տուն կառուցելիս միայն հիմքը բավարար չէ: Հիմքից հետո սկսվում է պատերի կառուցումը: Պատերն են, որ ձևավորում են տան տեսքը, բաժանում սենյակները և, ամենակարևորը, պաշտպանում ներսում գտնվող մարդկանց:

Տունը կառուցելիս անհրաժեշտ է պատերն այնպես շարել, որ կարճ ժամանակ անց ճաքեր չառաջանան և չվտանգեն ներսում գտնվողների կյանքը: Բայց միայն քարերն իրար վրա դնելը բավարար չէ: Դրանք պետք է ամրացվեն շաղախով, որպեսզի քարերը միմյանց կպչեն, դառնան մեկ ամբողջություն և դիմանան ժամանակի փորձությանը: Եթե շաղախը թույլ է, քարերը կարող են բաժանվել, և պատը կկորցնի իր ամրությունը:

Այդ պատերի ներսում մեր ընտանիքն է՝ ամենամոտ ու ամենասիրելի մարդիկ: Հենց պատերն են ստեղծում այն փոքր աշխարհը, որտեղ մենք ապրում ենք միասին, խոսում, խաղում, երբեմն էլ նեղանում ու հետո հաշտվում:

Մեր ընտանիքի «պատերն» էլ ունեն իրենց «շաղախը»: Դա այն է, ինչը մեզ միավորում է, պահում միասին և ամուր կապում իրար: Այդ շաղախի հիմքում պետք է լինի սերը: Երբ ընտանիքում կա սեր, մարդիկ կարողանում են ներել, հասկանալ և աջակցել միմյանց:

Իսկ արդյո՞ք պատերից ներս մենք մեր խոսքերով, վարքով ու վերաբերմունքով պահպանում ենք մեր տան խաղաղությունը: Երբ սիրով ենք խոսում, համբերատար ենք և օգնում ենք միմյանց, կարծես ամուր «պատեր» ենք կառուցում մեր ընտանիքի շուրջը:

Աստվածաշունչն ասում է.

«...Ինչպես ես ձեզ սիրեցի, նույնպես դո՛ւք միմյանց սիրեք: Դրանով բոլորը կճանաչեն, որ դուք իմ աշակերտներն եք, եթե միմյանց նկատմամբ սեր ունենաք» (Հովհաննես 13.34):

Սա մեզ հիշեցնում է, որ ընտանիքի ամենակարևոր «շաղախը» սերն է: Երբ կա սեր, կա նաև հարգանք, ներողամտություն և խաղաղություն:

Իսկ երբ մենք բարկանում ենք, վիրավորում կամ անուշադիր ենք լինում, այդ «պատերը» կարծես փոքր ճաքեր են ստանում, իսկ «շաղախը»՝ թուլանում: Սկզբում դա փոքր բան է թվում, բայց ժամանակի ընթացքում կարող է մեծ խնդիր դառնալ:

Քո խոսքերով և արարքներով դու ամեն օր օգնում ես կառուցել քո ընտանիքի «տան պատերը»: Թող դրանք լինեն ամուր, իսկ դրանց «շաղախը»՝ սիրով լցված, որպեսզի ձեր տանը միշտ տիրեն խաղաղությունը, ջերմությունն ու ուրախությունը:

# ՏԱՆ ԴՈՒՌԸ

Երբ պատերն արդեն ամուր կանգնած են, հերթը հասնում է դռանը: Դուռը տան այն հատվածն է, որը կապ է ստեղծում ներսի և դրսի աշխարհի միջև: Այն կարող է բացվել և փակվել՝ թույլ տալով մեզ դուրս գալ կամ հյուրերին ներս հրավիրել: Մենք ենք որոշում՝ երբ և ում համար բացել այն:

Մեր կյանքը նման է մի տան, որի դռան բանալին մեր ձեռքում է: «Դուռը» բացելով՝ հրավիրում ենք մարդկանց, որոնք կարող են մեզ դարձնել ավելի լավը կամ, հակառակը, տխրեցնել և շեղել ճիշտ ճանապարհից: Սա շատ նման է ընկերներ ընտրելուն կամ լավ ընկեր լինելուն:

Աստվածաշունչը մեզ զգուշացնում է.
«Մի՛ խաբվեք. չար ընկերակցությունները բարի վարքն ապականում են» (Ա Կորնթացիս 15.33):
Եթե մեր դուռը բացենք այնպիսի մարդկանց առաջ, ովքեր վատ սովորություններ ունեն, կարող ենք ընդօրինակել նրանց սխալ վարքը:
Բայց հիշի՛ր, որ դու էլ մեկ ուրիշի ընկերն ես: Որպեսզի մարդիկ ուրախությամբ բացեն իրենց դուռը քո առջև, դու ինքդ պետք է լինես բարի, ազնիվ և հավատարիմ:
Դու ես քո տան «դռան պահապանը» և դու ես որոշում, թե ում համար բացել այն:
Ընտրի՛ր այնպիսի ընկերներ, որոնք քեզ կօգնեն դառնալ ավելի լավը, և ինքդ էլ եղիր այնպիսի ընկեր, որը կուղղորդի մյուսներին դեպի Աստված:

# ՏԱՆ ՏԱՆԻՔԸ



Պատկերացրեք մի տուն, որն ունի ամուր պատեր, հարմարավետ սենյակներ, բայց չունի տանիք: Այդ տան մեջ հնարավոր չի լինի ապրել, քանզի անձրևը կթրջի ամեն ինչ, իսկ քամին դուրս կհանի տան տաքությունը: Տանիք կառուցելը մի իսկական արվեստ է. սկզբում վարպետները տեղադրում են ամուր գերաններն ու հեծանները, որոնք տանիքի «ողնաշարն» են, իսկ հետո դրանց վրա մեկ առ մեկ շարում են պաշտպանիչ շերտերը: Յուրաքանչյուր մեխ ու յուրաքանչյուր թիթեղ իր կարևոր տեղն ու դերն ունի, որպեսզի տանիքը լինի ապահով ու պաշտպանի մեզ բնության երևույթներից:

Բայց եթե սովորական տանիքը պաշտպանում է մեկ ընտանիքի, ապա Հայրենիքը մեր բոլորի ընդհանուր ու մեծ տանիքն է: Ինչպես տունն է անպաշտպան առանց տանիքի, այնպես էլ ժողովուրդն է խոցելի առանց հայրենիքի: Տանիքը խնամքի կարիք ունի. եթե այն վնասվում է, տան բնակիչները պետք է անմիջապես նորոգեն այն, որպեսզի տունը չխոնավանա: Նույն կերպ մեր մեծ «տանիքը»՝ հայրենիքը, ամուր պահելը յուրաքանչյուրիս պարտքն է: Մենք մեր աշխատանքով, պատասխանատու քաղաքացի և լավ աշակերտ լինելով՝ ամրացնում ենք մեր տանիքը և հզորացնում հայրենիքը: Հեռու երկրներում ապրող մարդը կարող է ունենալ շքեղ տուն, բայց միայն հայրենիքում է զգում իրեն լիարժեք, պաշտպանված և «տանը»:

Աստվածաշնչում գրված է. «Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինարարները. եթե Տերը չպահպանի քաղաքը, զուր է անքուն լինում պահապանը» (Սաղմոս 127.1):

Մեր հայրենի տանիքն ամուր է այնքանով, որքանով ամուր է մեր կապն Աստծո հետ: Ինչպես վարպետն է խնամքով դնում տանիքի ամեն մի թիթեղը, այնպես էլ Աստված է խնամում մեզ ու մեր երկիրը, եթե մենք վստահում ենք Իրեն: Սա մեզ սովորեցնում է, որ մեր տունն ու Հայրենիքը միշտ կանգուն կլինեն, եթե դրանք կառուցենք հավատքով, աղոթքով ու սիրով: Մեր հայրենի տանիքի տակ մենք բոլորս մի մեծ ընտանիք ենք, և յուրաքանչյուրիս պատասխանատու, նախաձեռնող ու սրտացավ լինելն օգնում է զորացնել մեր հայրենիքը:

# ՏԱՆ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ

Ի՞նչ է մեզ պակասում՝ մեր տունն ավարտին հասցնելու համար... Իհարկե պատուհանները: Այն տանը, որն ունի ամուր պատեր ու հուսալի տանիք, բայց չունի ոչ մի պատուհան, այնտեղ ապրելն անհնար կլինի: Այնտեղ նույնիսկ ցերեկով մութ կլինի, և մենք չենք կարողանա տեղաշարժվել տան ներսում, ինչպես նաև չենք տեսնի դրսի գեղեցիկ աշխարհը: Պատուհանը բացում է մեր տունն արևի շողերի առջև և թույլ է տալիս, որ մաքուր օդը ներս մտնի ու թարմացնի ամեն ինչ:

Այդպես է նաև մեր կյանքում: Ինչպես պատուհաններն են լուսավորում մեր տունը, այնպես էլ Աստծո հանդեպ հավատքն է լույս սփռում մեր կյանքի վրա: Առանց հավատքի մարդու հոգին նման է մութ սենյակի, որտեղ դժվար է կողմնորոշվել և ճիշտ որոշումներ կայացնել: Բայց երբ բացում ենք մեր սրտի «պատուհաններն» Աստծո առաջ, Նրա սերն ու բարությունը լցվում են մեր ներսը՝ դարձնելով մեզ ավելի ուրախ ու խաղաղ:

Իսկ որտե՞ղ ենք մենք սովորում այդ պատուհանները մաքուր պահել: Իհարկե եկեղեցում: Եկեղեցին նման է մի մեծ ու լուսավոր պատուհանի, որը մեզ ցույց է տալիս ճանապարհը դեպի Երկինք: Այնտեղ մենք սովորում ենք աղոթել, սիրել ու ներել, ինչն օգնում է, որ մեր հոգու ապակիները միշտ թափանցիկ լինեն, և Աստծո լույսն անարգել թափանցի մեր կյանք:

Աստվածաշնչում Հիսուսն ասում է. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհաննես 8.12): Սա նշանակում է, որ պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, ապրենք Նրա Խոսքի համաձայն և հավատքով հետևենք Նրան: Միայն այդ դեպքում մեր կյանքն իրապես լուսավորված կլինի, ինչպես մի մեծ ու գեղեցիկ տուն, որն ունի ընդարձակ պատուհաններ ու լուսավորված սենյակներ:

# Եթե լինեիր թագուհի կամ թագավոր...

Հիշո՞ւմ ես Աստվածաշնչյան հերոսուհի Եսթերին, որը դարձավ Պարսկաստանի թագուհին: Աստված նրան չդրեց պալատում պարզապես շքեղ կյանքի համար, այլ նախապես տեսել էր իր ժողովրդին սպառնացող վտանգը և Եսթերի միջոցով փրկեց հրեաներին (կարդա՛ Եսթերի պատմությունը Աստվածաշնչից):

Եսթերի օրինակով դու էլ քաջություն ունեցիր հայրենասիրություն ցուցաբերել, երբ տեսնում ես, որ ինչ-որ մեկը վնասում է քո երկիրը, օրինակ՝ աղբ է թափում, ծառեր է կոտրում կամ վատ է խոսում ազգի մասին: Քո «պալատը» քո դպրոցն է, քո տունն է, քո բակն է: Այնտեղ դու ունես առաքելություն՝ լինել օգնող, բարի ու հոգատար: Ինչպես Եսթերը դժվար պահին վստահեց ու ապավինեց Աստծուն, այնպես էլ դու կարող ես քո ամենօրյա աղոթքի մեջ դիմել Աստծուն Հայրենիքի համար: Հիշի՛ր՝ դու փոքր չես՝ Աստծո ձեռքում մեծ գործիք դառնալու համար:

Պատկերացրո՛ւ, որ քո երկրի թագուհին
կամ թագավորն ես:

Ի՞նչ կանես հայրենիքիդ համար:

Թագի մեջ գրի՛ր այդ քայլերը և զարդարիր
այն քո նախընտրությամբ:

# «Աստծո ստեղծագործության հրաշքը»

**Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու (ՀԱԵ)** և **Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (AMAA)** մշակութային խմբակների համատեղ նախաձեռնությամբ Ավետիսյան դպրոցում անցկացվեց «Աստծո ստեղծագործության հրաշքը» խորագրով երկրորդ ցուցահանդեսը: Այս տարվա թեման նվիրված էր ծովերի և օվկիանոսների աշխարհին:
Ցուցահանդեսի բացումն ազդարարվեց Ավետիսյան դպրոցի «Արտավյուն» թատերախմբի ներկայացմամբ և կարմիր ժապավենի կտրմամբ:

«Այսօր մեր առջև բացվել են ծովերն ու օվկիանոսները՝ որպես Աստվածային ներկայության խորհրդանիշ՝ հիշեցնելով, որ այնտեղ, ուր մարդկային հայացքը չի հասնում, Աստծո ձեռքը շարունակում է ներկա լինել՝ կյանք պարգևելով անգամ ամենախոր լռության մեջ»,- բացման իր խոսքում նշեց ՀԱԵ քրիստոնեական դաստիարակության բաժնի մշակութային աշխատանքների համակարգող Վազգեն Թորոսյանը:

Ծովային կենդանիների, կորալների և ստորջրյա աշխարհի պատկերներով ձևավորված ցուցասրահը վերածվել էր յուրահատուկ ստեղծագործական միջավայրի, իսկ կենտրոնում պատկերված Նոյյան տապանը հիշեցնում էր հույսի ու փրկության մասին:

Մանկական երևակայությամբ ստեղծված աշխատանքները յուրովի ներկայացնում էին բնության գեղեցկությունն ու մարդու պատասխանատվությունը դրա պահպանման հանդեպ:

Ցուցահանդեսին մասնակցում էր 135 սան՝ Գյումրիից, Շիրակամուտից, Աբովյանից և Երևանից: Ներկայացված աշխատանքները ստեղծվել էին փայտամշակման, դիզայնի, գոբելենագործության, նկարչության, տիկնիկագործության և հուլունքագործության խմբակներում՝ արտահայտելով երեխաների ստեղծագործ միտքն ու բնության հանդեպ սերը:

Վազգեն Թորոսյան

# ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍԸ

Եթե ընկերությունն ուտեստ լիներ,
ապա դրա ամենակարևոր
բաղադրիչը սերը կլիներ:

Բայց մեկ բաղադրիչով ուտեստ դժվար
թե գտնվի, ուստի մեզ անհրաժեշտ են
նաև այլ բաղադրիչներ:

Ներքևում նշի՛ր,
թե որքան և ինչ է քեզ անհրաժեշտ՝
իսկական ընկերություն
ունենալու համար:

| | | |
|---|---|---|
| 200 | գրամ | սեր |
| ____ | գրամ | _____ |
| ____ | գրամ | _____ |
| ____ | գրամ | _____ |
| ____ | գրամ | _____ |
| ____ | գրամ | _____ |
| ____ | գրամ | _____ |

# ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԻԿՏՈՐԻՆԱՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐՆ ԵՆ

# Սուրբ Հարության տոնը Հաղբատում